

հանէին, եւ զՄերութանայ զգլուխն ի բաց հատանէին. եւ ամենայն զաւրացն լինէր փախուստ, իբրեւ տեսին թէ Մերութանն մեռաւ:

38 Եւ աստի գունդն մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զհետ մերութանեան զնդին. հարկանէին սատակէին զնոսա, եւ զմի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին: 39 Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ եւ եմուտ, զանխուլ ի մանուէլեան զնդէն, առ ափն Եփրատ գետովն. եհար սատակեաց ի մերութանեան զնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց: 40 Եւ նշանակիր մի ի Մերութանայ իբրեւ ետես զԱրտաւազդն, յընչացք եբաց¹. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս, երեսաւք գեղեցիկ. ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ ի վերայ նորա: 41 Իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ. եւ կարանէ ի կարան թափ հանեալ զնետն դի² ցամաք ընկենոյր զնա: 42 Եւ առեալ զնիզակն, զհետ մտեալ փախստեցն, ընդ սուր հանեալ զգաւրսն Մերութանայ, աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուկն կոտորէր. եւ ինքն մեծաւ անուամբ, եւ բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի զաւրաց թշնամեացն:

43 Բայց յաւուր յայնմիկ լինէր մեծ վնաս անհնարին. զի Վաչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր: 44 Սոյնպէս եւ զԳարջոյլ Մադխազ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ ի թերավարժ ձիոյ հեծեալ էին երկոքին:

45 Իսկ³ դառնայր Մանուէլ երթայր ի բանակն տիկնոջն հասանէր. տանէին ընդ ինքեանս զգլուխն Մերութանայ. եւ Սամուէլ որդի Վահանայ ոչ դիպեցաւ ընդ Մանուէլի, զի դարձաւ նա ի բանակն: 46 Սակայն յորժամ տեսին զգլուխն Մերութանայ կանայք բանակին Մանուէլի, մեծաւ աղաղակաւ ճիչ բառնային⁴. զի նոքա այսպէս համարեցան թէ այն գլուխ Սամուէլի որդւոյ Վահանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերութանն եւ Սամուէլ: 47 Ապա տեսին զգլուխն Մերութանայ, զի զցիցն երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Սամուէլայ, այլ Մերութանայ Արծրունոյ. այլ ասացին. Սակայն դա մեր եղբայր է: 48 Ապա եկին բերին զմարմին Վաչէի ի բանակ անդր, հաւրն Արտաւազդայ, եւ զմարմինն Գարջուլայ Մախազու Խոռխոռունոյ, եդին աշխար մեծապէս, եւ լացին զնոսա: 49 Եկին բերին զայրն նշանակիրն Մերութանայ, զոր եհարն Արտաւազդ նետին. եւ ամենայն ոք զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ ի կարան անցեալ էր, իբրեւ տեսին

1 Օրինակ մի՝ յընչացքէ. բայց զի

2 Զիք ի բնագրին

3 Օրինակ մի յաւելլու՝ Զրիստոսիւ զօրացեալն

4 Օրինակ մի՝ ճիչ բարձեալ լային